ՀՈԲԵԼՅԱՆ

ՀՈՎՎԱԿԱՆ ՍԻՐՈՎ ԵՎ ՆՎԻՐՈՒՄՈՎ

«Եթէ մէկն ուզում է առաջինն լինել, բոլորից վերջինը և բոլորի սպասաւորը պէտք է լինի» (Մարկ. Թ 34):

Օգոստոսի 29-ին լրացավ Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Գևորգ Արքեպիսկոպոս Սերայդարյանի ծննդյան 60-ամյակը: Հոբելյանը մեծ շուքով նշվեց Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսում հայ համայնքի կողմից՝ ի գնահատություն Սրբազան Հոր անձնվեր ծառայության և շուրջ քառորդ դար վիրահայոց հովվությունը ջանասիրաբար ու մեծ պատասխանատվությամբ իրականացնելու:

Գևորգ արքեպս. Սերայդարյանը պարգևատրումից հետո Սայաթ-Նովայի շիրմի մոտ

Անշուշտ տարիները ի զորու չեն բնորոշելու մարդկային կյանքի արժանիքները, երկարակեցությունը չի կարող իմաստ հաղորդել մարդկային կյանքին, եթե մարդ ինքը չկարողանա իմաստ տալ իր ապրած տարիներին, եթե տարիները չծառայեն և միջոց չդառնան իր ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ իրագործելու և իր ՊԱՐՏՔԸ հասարակությանը, մարդկությանը տալու գործում:

Սրբազան Հոր պարագային տարիները ավելանում են՝ իր արժանիքները առավելագույնս արտահայտելու հնարավորություն ստեղծելով:

Սրբազան Հայրը իր ողջ գիտակցական կյանքը ի սպաս է դրել Հայց. Եկեղեցու և հայ ժողովրդի ծառայությանը, իր կյանքով, իր կենցաղավարությամբ ու աստվածահաճո կեցվածքով դարձել Քրիստոսի մշտաքարոզ առաքյալ, ուսուցիչ իրական, քրիստոնյային վայել կյանքի, օրինակելի ու տիպար հոգևորական՝ հոգևոր եղբայրների համար:

Կարպիս Սերայդարյանը (Սրբազան Հոր ավազանի անունն է) ծնվել է

Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում 1938 թվականին: Տասը տարեկան Կարպիսը 1948 թ. ծնողների հետ ներգաղթում է հայրենիք՝ մայրաքաղաք Երևան, ուր էլ 1956 թ. ավարտում է միջնակարգ դպրոցը և նույն թվականին ընդունվում Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան: Ճեմարանական տարիները պատանի Կարպիսի համար եղան հոգևոր վերելքի, իմացության և գիտական մտքի ձևավորման շրջան: 1962 թ. ճեմարանավարտ Կարպիսը ձեռնադրվում է սարկավագ և մուտք գործում հոգևոր սպասավորության դաշտ: Այս պահից սկսած երիտասարդ սարկավագը որոշում է իր ծառայությունը Հայց. Եկեղեցուն բերել որպես կուսակրոն հոգևորական: Եվ 1964 թ. ձեռնադրվում է աբեղա:

Սրբազան Հայրը որպես գիտնական հոգևորական բազմաթիվ հոդվածներ ու աշխատություններ ունի: Մեծ ավանդ ունի տոմարագիտության ուսումնասիրության բնագավառում: Երկարատև պրպտումների արդյունք որպես, Սրբազան Հայրը պատրաստեց «Տոմարագիտության դասընթաց» գիտական աշխատությունը, որը տալիս է տոմարին առնչվող բազմաթիվ հարցերի սպառիչ պատասխաններ: Նույն աշխատությունը թարգմանվել է ռուսերեն՝ նպատակ ունենալով օտար ընթերցողներին և հետազոտողներին հասու դարձնել հայ տոմարական գիտությանը:

1970–1972 թթ. Եկեղեցական տոմարագիտություն և այլ կրոնական առարկաներ է դասավանդում Հոգևոր Ճեմարանում:

1971 թվականից առ այսօր Սրբազան Հայրը մեծ ջանասիրությամբ ու նախաձեռնությամբ պատրաստում է Հայաստանյայց եկեղեցիներում կիրառվող եկեղեցական օրացույցը:

1972 թ. երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի Սրբատառ կոնդակով նշանակվում է Վիրահայոց թեմի առաջնորդական փոխանորդ և ստանում ծայրագույն վարդապետական գիտական աստիճան: Իսկ մեկ տարի անց ձեռնադրվում է եպիսկոպոս և նշանակվում առաջնորդ:

1995 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջին Հայրապետը Սրբազան Հորը շնորհում է Արքեպիսկոպոսական աստիճան:

Եվ արդեն շուրջ քսանհինգ տարի է, ինչ Սրբազան Հայրը Ավետարանական Բարի հովվի կերպարը իր կյանքով վկայելով, խնամք է տանում իրեն վստահված հոգևոր հոտի նկատմամբ՝ ամենայն բարեխղճությամբ և բարձր գիտակցությամբ:

Սրբազան Հայրը մեծ ներդրում ունի նաև հայ և վրաց ժողովուրդների, Հայաստանյայց և Վրաց Ուղղափառ Եկեղեցիների բարեկամական հարաբերությունների ստեղծման և զարգացման ոլորտում:

Անշուշտ մենք չէ, որ պետք է գնահատական տանք Սրբազան Հոր գործունեությանը: Մենք կարող ենք միայն արձանագրել այն՝ համոզումով, որ այդ գործունեությունը ուսանելի ու վարակիչ է երիտասարդ հոգևորականներիս համար:

Ի գնահատություն Գևորգ Սրբազանի բեղուն գործունեության, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը Հայրապետական Օրհնության Գիր տվեց Սրբազան Հորը (տե՛ս էջ 154):

Սեպտեմբեր ամսին Վրաստանի Հանրապետության նախագահ Էդուարդ Շևարդնաձեն Սրբազան Հորը պարգևատրեց Պատվո շքանշանով և գրեց շնորհավորական ուղերձ.

Վիրահայոց թեմի առաջնորդ
Գեր. Տ. Գևորգ Արքեպիսկոպոս Սերայդարյանին

Ձերդ Բարձր Սրբազնություն,

Շնորհավորում եմ Ձեր ծննդյան 60-ամյակը:

Քառորդ դար առաջ Աստուծո կամքով Դուք ոտք դրեցիք վրաց հող և Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի օրհնությամբ դարձաք Վրաստանի հայ համայնքի հոգևոր հովիվը:

Հանձինս Ձեզ թե՛ հայկական և թե՛ վրացական Եկեղեցիներն ունեն անկեղծ բարեկամ, Դուք սրտով սիրում եք երկու հինավուրց ազգերի պատմությունն ու ներկան:

Մեզ հայտնի են Ձեր լուսավորչական գործունեությունը, գիտատեսական աշխատանքները, Աստվածաբանության հարցերում Ձեր իմացությունները:

Եվ թող Աստված Ձեզ շնորհի երկարակեցություն, մաղթում եմ քաջառողջություն, որպեսզի հաջողությունները Ձեզ ուղեկցեն հովվական գործերում, որպեսզի աղոթք-մաղթանք առաքեք ժողովուրդների լուսավոր ապագայի համար, որպեսզի Ձեր օրհնությամբ է՛լ ավելի ամրապնդվեն վրաց-հայ ժողովուրդների անաղարտ, անկեղծ, բարեկամական հարաբերությունները:

Տերն ընդ Ձեզ՝

ԷԴՈՒԱՐԴ ՇԵՎԱՐԴՆԱՁԵ

Իր եղբայրական ջերմ զգացմունքներն է հայտնել նաև Վրաց Ուղղափառ Եկեղեցու Պետ Իլիա Բ Կաթողիկոսը.

Ձերդ Բարձր Սրբազնություն,

Վրաց Ուղղափառ Եկեղեցու և անձամբ իմ կողմից Ձեզ սրտանց շնորհավորում եմ Ձեր ծննդյան 60-ամյակի առիթով: Վրաստանում Ձեր ծառայության 25 տարվա ընթացքում Դուք շատ բան եք արել Վրաստանի և Հայաստանի ժողովուրդների բարեկամական հարաբերությունների

ամրապնդման համար: Մենք նաև բարձր ենք գնահատում Ձեր ավանդը Վրացական Ուղղափառ Եկեղեցու և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու եղբայրական կապերի ամրապնդման գործում: Ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն և երջանիկ երկարակեցություն, իսկ Եկեղեցուն և Ձեր երկրին՝ խաղաղություն և հետագա բարգավաճում:

Հարգանքներով՝

ԻԼԻԱ ԵՐԿՐՈՐԴ
Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք

***

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը նույնպես շնորհավորում է Սրբազան Հորը՝ մաղթելով երջանիկ ծառայություն և երկար տարիների քաջառողջություն՝ հովվելու համար հայ ժողովրդի մի ստվար հատվածին:

ԱՐՇԵՆ ԱԲԵՂԱ ՍԱՆՈՍՅԱՆ